ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «22» սեպտեմբերի 2023թ. N 1820 Ա

«ՓԻՐՈՒԶԱ ԱԲԱՋՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման հավելվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով և հիմք ընդունելով համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, նշանակման ոլորտի սահմանման, ինչպես նաև նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման համար ստեղծված աշխատանքային խմբերի 2023 թվականի սեպտեմբերի 20-ին կայացած աշխատանքային հանդիպման արձանագրությունը.

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. ««Փիրուզա Աբաջյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերության) արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել սույն հրամանի հավելվածում նշված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված

արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի ((հավատարմագրման գրանցահամար՝ N 011/S-049) N 1 (A 1), N 2) հավելվածներով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրի, արտադրանքի բնութագրերը և նորմերը սահմանող նորմատիվ իրավական ակտի, համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված նմուշառման մեթոդը սահմանող փաստաթղթի նշագրի:

2. Ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել համապատասխանության գնահատման մինչև 2027 թվականի հուլիսի 7-ը, տրամադրել նշանակման վկայական՝ Ն-25 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-25 (Հ-25) 2023:

3. Ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Հանձնարարել՝ Ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակման ողջ ժամանակահատվածում ապահովել գործող Պատասխանատվության ապահովագրության պայմանագրի առկայություն:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

9/27/2023

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023թ.
սեպտեմբերի 22-ի N 1320-Ա հրամանի

ՑԱՆԿ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի **N** 827 որոշմամբ ընդունված «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 014/2011):

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ

1. ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «2523 10 000 0» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք):